


9968



1906.

2010

184
6/IV
20116
TCL

ԲԱՆԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ
և բ
ԻՆՏԻԼԻԳԵՆՑԻԱՆ

Թուս. քարզ,
Օրու Տէր-Առաջելեանց

Ավագանութեանու
Տպարան Յ. Պատապեանցի

1907

(30)

27

Հայոց

335
9-83

Հ 9 0 8 4 6

43-Է

ՅԱՆԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ
ԵՒ

ԻՆՏԻԼԻԳԵՆՑԻԱՆ

Առաջ.

Արքունի Տէր-Առաքելական

Ա.Ա.ՔԱՅԱՆԴՐԱՊՈՅ,
Տպարան Յ. Պատապեանցի

1906

(80)



31288-4.2

ԲԱՆԿՈՐ ՔԱՍՏԿԱՐԳԸ

ԵՒ

ԻՆՏԻԼԻԳԵՆՑԻԱՆ

«Բանւոր դաստկարգի ազատութիւնը պէտք է նոյն բանւոր դաստկարգի գործը լինի»։ Այդպէս է ասել ընդհանուր աշխարհի, բոլոր ժողովուրդների ազատութեան և բազգաւորութեան համար կռւող մեծ մարտիկը, գիտական սօցիալիզմի հայրը և միջազգային սօցիալ-դէմոկրատիայի հիմնադիր՝ ԿԱՐԼ ՄԱՐԿՍՈՒԾ



Նա ալգապէս է ասել, որպէսէտեւ նրա աչքերի առաջ կենդանի կանգնած էին անցեալի պատկերները, երբ Արևմտեան Եւրոպայի բանւոր դաստկարգը տառապում էր գերութիւնից, խարխա-

12001

փում էր տգիտութեան մէջ և քար-
քայւած ու ջալջախւած, ուժասպառ
թփրտում էր հին ինքնակալութեան
և աճող կապիտալիզմի ճանկերում.—
իսկ անկեղծ և զարդացած առանձին
մարդիկ, փափուկ հոգով և խղճահար-
ւած սրտով ի զուր տեղը քարոզ էին
կարդում կառավարութեանը և հարուստ
դասակարգին, կոչ էին անում նրանց
բարութեան և քրիստոնէական զգաց-
մունքներին և աշխատում էին «լուսա-
ւորել» նրանց մտքերը և սրտերը։ Այդ
զարդացած մարդկանց սարսափեցնում
էր բանւոր ժողովրդի աղքատութիւնը
ու տանջանքները, նրանց վրդովեցնում
էր այն կարգի անարդարութիւնը, որի
շնորհիւ նրանք, ովքեր ամենից շատ
են շարչարւում և որոնց պարտական է
ամբողջ աշխարհը իր կուլտուրայով և
հարստութիւնով՝ ամենից վատ են ապ-
րում, ամենից շատ են տանջւում և
ամենեին չեն օգտում իրենց ստեղծած

կուլտուրական բարիքներից և հարս-
տութիւններից։
Բայց այդ մարդիկ վերևուց ներքե-
էին նայում ժողովրդին, շատ հեռու
էին կանգնած ժողովրդից և վախենում
էին նրանից։ Վախենում էին նրա տգի-
տութիւնից ու վայրենութիւնից, վա-
խենում էին նրա քայլքայիչ, կոյլ շար-
ժումներից, և չէին հաւատում նրա
կռւելու ընդունակութեանը։ Եւ փոխա-
նակ ուղղակի բանւորներին դիմելու,
արթնացնելու նրանց մէջ դասակարգա-
լին գիտակցութիւնը և կռւի կանչելու,
նրանք քարոզի խօսքով դիմում էին
այն մարդկանց, որոնցից գալիս էին տան-
ջանքները, ովքեր ժողովրդի աղքատու-
թեան և ճնշումների մեղաւորներն
էին։

Ինչ կայ ասելու, որ նրանց խօս-
քերը մնում էին «ձայն բարբառոյ յա-
նապատի», իսկ տանջւածներին օգնե-
լու համար արած նրանց բոլոր փոր-

ձերը նման էին թղթախաղերից շինւած տնակների, որ քամու մի փոքր փշելուց խորտակում էին:

Հոչակաւոր մտածող-ժողովրդասերներ, անգլիացի Օռլէն և ֆրանսիացի Փուլյէն. 19-որդ դարի սկզբում, այսպէս կոչւած հասարակութեանը և կառավարութեանը ուղղած իրանց շատ քարոզներից լետոյ, վճռեցին գործնականապէս ցոլց տալ, որ հնարաւոր են և այլ կարգեր, որ բոլոր մարդկանց կարելի է ալինպէս կարգաւորել, որպէսզի ոչ չտուժէ, որպէսզի ամենքն էլ հաշտ և համերաշխ ապրեն, և որպէսզի դրա հետ միասին ծաղկի արդիւնաբերութիւնը և առևտուրը: Խոշոր կապիտալիստ և գործարանատէր Թօրէրտ Օռլէն վճռեց իր ձեռնարկութիւնը ընկերական հողի վրա տանել, բանւորների հետ միասին: Նա հաւասար չափով աշխատում էր բանւորների հետ, նրանք միասին քննում էին բոլոր գործերը, և

հաւասարապէս բաժանում էին ամբողջ արդիւնքը: Փողի փոխարէն նոցանում գործարանի մէջ գործ էր ածւում թղթիկներ, որոնց վրայ կրւում էր վաստակած ժամերը:

Քանի գեռ կենդանի էր ինքը Թօրէրտ Օռլէն, նրա բանւորները լաւ վիճակի մէջ էին և ամբողջ գործը լաւ էր գնում: Նայելով այդ խաղաղ կեանքի պատկերին, գործարանատիրոջ ու բանւորների այդ բազդաւոր կեանքի վրայ, մարդիկ սրտով հրճւում և հիանում էին:

Բայց Թօրէրտ Օռլէն մեւտեւ և ամբողջ գործը քանդւեց, իսկ դրա հետ միասին վերջացաւ և բանւորների բաղդաւոր կացութիւնը:

Անգլիական կառավարութիւնը, գործարանատերէրի գործ դրած մեքենա- յութիւնների շնորհիւ, չկամեցաւ իրաւատէր ճանաչել բանւորներին, ընդհանուր գործարանի վերաբերմամբ.

միւս կողմից ինքը Բօրէրտ Օռւէն, Հաւատ չընծայելով բանւորների՝ որպէս մի դասակարգի-ինքնագործունէութեան, ինքը անձամբ հակառակ լինելով նրա ամեն մի կազմակերպութեան և նրա ամեն մի կազմակերպւած շարժումներին, հոգ չէր տարել, որ մի կերպ իրաւաբանօրէն, կարգաւորեր գործարանի վերաբերմամբ բանւորների իրավասութիւնը:

Փուրիէն աղքատ էր: Նա տքնում էր մի գաղութ հիմնել, ուր եղբայրմարդիկ կարողանալին հաշտ և համերաշխ աշխատել և միասին օգտւել իրանց ձեռքերի պատուզներից: Նա բոլոր լրագրներում յայտարարութիւններ գետեղ ինդրելով «Քարի» հարուստ մարդկանց նւիրել իրեն այդ գործի համար մի միլիոն ըուբլի, ընդամենը մի միլիոն միայն: Սակայն ոչ ոք չպատասխանեց նրա այդ կոչին և մինչեւ իրա կեսնքի վերջը Փուրիէն ամեն-օր, իրա նշանա-

կած որոշ ժամերում իզուր տեղն էր սպասում բանւորների-բարեգործ հարուստներին:

Ոչ, բանւոր դասակարգը ոչինչ չըպէտք է սպասի հարուստ մարդկանցից, կապիտալիստ-սեփականատէրերից և սեփական շահեր պաշտպանող պաշտօնեաներից: Զարաչար սիսալւում էին Փուրիէն և Օռւէն, կարծելով որ համոզւած խօսքը և կրակոտ կոչը կարող են ազգել քաղցած ժողովրդի իշխանութիւնը իրենց ձեռքը պահող մարդկանց վրայ, չարաչար սիսալւում էին նրանք, յուսալով՝ որ մի գեղեցիկ առաւօտ զգացւած զեկավարները և կապիտալիստ-շահգործողները իրանց սեփական նախաձեռնութեամբ և սեփական կամքով կը վերակազմեն տմբողջ հասարակութիւնը, ամբողջ աշխարհը, և կը հաստատեն արդարացի կարգեր, բոլորի համար հաւասարութիւն, եղբայրութիւն և բաղդասորութիւն:

Դրանց հետ միասին սխալւեցին նրանց աշակերտները և նրանց վարդապետութեան բազմաթիւ հետեւ ողները: Բոլոր ժողովրդասէր ինտիլիգենցիան, թէ մեզանում և թէ Եւրոպայի Արևմուտքում, շատ է տանջւել գէպի ճնշւածները իր համարձակ արտայատած սիրոյ խօսքի և մասնակցութեան համար, շատ է տուժել տիրող «կարգերի» վրայ գործած իր լարձակումների համար, որով հետեւ խայտառակումէր չարութիւնը, անօրէնութիւնը և ցանկանում էր այլ կեանք, այլ կարգեր, ցանկանում էր բոլորի համար արդարութիւն և բաղդաւորութիւն:

Ամեն մի անարդարութեան, չքաւորութեան և շահագործութեան լիովին ոչնչացումը սօցիալիզմի պահանջն է: իսկ այն, որ այդ պահանջները առաջարկւում էր կառավարութեանը և հարուստներին, շահագործող գասակարգերին, այն, որ բոլոր մարդկանց հա-

մար ցանկանում էին ազատութիւն, արդարութիւն և բաղդաւորութիւն ձեռք բերել ոչ ժողովրդի միջոցաւ, այլ անկախ ժողովրդից, այդ գարձնում էր սօցիալիզմը ուտօպիական, այսինքն անիրագործելի, ամպերից վերև գտնւող և աներեակայելի: Ահա թէ ինչու բոլոր գրան հետեւողները, ինչպէս Փուլը լին և Օուէն իրանց հետեւողներով, այնպէս էլ միւս, նոյնպէս քաղաքական ցնորամիտները, կոչւում են ուտօպիական սօցիալիստներ:

Բայց այդ գեռ քիչ է: Ուտօպիական սօցիալիստներ են ներկայանում և նրանք, ովքեր, թէև ժողովրդին են դիմում և ոչ կառավարութեանը ու արտօնեալ գասակարգերին, սակայն նոյն ժողովրդի մէջ չեն զանազանում առանձին գասակարգերը, չեն ուզում տեսնել, որ ժողովուրդը ոչ թէ մոխրագոյն մասսայ է, ոչ էլ ուղղակի չքաւոր ժողովուրդ, (բաճկոններ վերնազգեստներ

և չուխաներ). այլ ամենից առաջ մարդիկ են, որ զանազան արհեստագործութիւնով են զբաղւած, և որ ամենից գլխաւորն է, ամեն մէկը, այդ արհեստագործութիւնների մէջ, ունեն իրանց զանազան դրութիւնը:

Ժողովրդի միջից այն մարդիկ, որոնք զրկւած են ամեն մի սեփականութիւնից և ստիպւած են վաճառելու իրենց բանւորական ոլժը նախաձեռնող-կապիտալիստներին, բոլորովին ուրիշ դրութիւն ունեն, և գորա համար էլ ունեն բոլորովին այլ շահեր, քան նրանք, ովքեր զրկւած չեն սեփականութիւնից և անկախ են աշխատում, չնայած, որ մերթ ընդ մերթ նոյնպէս ստրկացած են, նոյնպէս կարիքների տէր են, ինչպէս և տռաջինները:

Յետոյ, առ ևտրականները պէտք է բաժանւած լինեն անմիջական արտագրողներից, վարձու բանւորներից, արհեստաւորներից, և գիւղացի հողագործ-

ներից, որովհետև նրանք էլ դարձեալ իրենց շահերն ունեն, որ տարրերւում է անմիջական արտագրող-աշխատաւորների շահերից: Մի խօսքով, ժողովուրդը անձև մի զանգւած չէ. ժողովուրդը բաղկացած է զանազան գասակարգերից և ժողովրդի բոլոր գասակարգերը հաւասարապէս իրաւունք չունեն սեփականեցնելու այն ինտելիգենցիալի քարոզները, որ քարիք է ցանկանում ժողովրդին և մտածում է ժողովրդի վրայ:

Պատմութիւննը ցուց է տւել, որ միակ գասակարգը, որ իսկապէս ձգտում է սօցիալիզմին, որ անմիջական շահագըրդգլուած է սօցիալիզմով, ներկայանում է պրօլետարիատը, վարձու բանւորների գասակարգը:

Եւ այն ամեքը, ովքեր դիմել են ոչ թէ պրօլետարիատին, այլ ասենք գիւղացուն, կամ քաղաքի մեշշանութեան, այն ամեքը, ովքեր չեն զանացնել վարձու բանւորներին, ժողովրդի

ամբողջ մասսալից, այլ դիմել են առհասարակ «ժողովրդին», դրանք բոլորն էլ գնացել են սխալ ճանապարհով և ոչ մի լաշողութիւն չեն ունեցել:

Մեզ մօտ, Ռուսաստանում այդպիսի սխալ գործեցին նաև 60-ական և 70-ական թւականներին այսպէս կոչւած «նարօդնիկները»: Նրանք «գընում էին ժողովրդի մէջ», այսինքն գիւղացիութեան մէջ, որովհետև նա կազմում էր և կազմում է իր քանակութեամբ ժողովրդի գլխաւոր մասսան:

Նրանք գնում էին ժողովրդի մէջ, որովհետև նա չքաւոր էր, խաւար և մոռացւած, որովհետև նրան թալանում և կեղեքում էին բռունցք-վաճառականները, հօղատէր-կալւածատէրերը և կայսերական պաշտօնեաները:

Նրանք գնում էին ժողովրդի մէջ որպէսզի լուսաւորեն նրան, բաց անեն նրա աչքերը և լետոյ միացնելով օդ-նեն նրան թափելու իր վրայից ճնշ-

ման և կեղեքման լուծը: Բայց ժողովուրդը չընդունեց նրանց: Նրա համար անհասկանալի և օտար էին այդ «զարգացած» մարդկանց, այդ «աղալ» բարեգործների ձառները:

Նա չափից գուրս շատ էր տուժել ուրիշ այդ տեսակ «զարգացած» մարդկանցից (կալւածատէրերից և պաշտօնեաններից), որպէսզի մինչև անգամ հասկանալով, կարողանալին հաւատալ և գնալ նրանց յետևից:

Ժողովրդի և ինտիլիգենցիալի մէջ ձգւած է ժողովրդական թշնամութեան անդունդը, որ կուտակւել է ժողովրդական զարեւոր ճնշումներով. ունենալով կողմից նրանց մէջ ձգւած է մի պատնէշ, որ հիւսւած է փոխադարձ անվստահութիւնից, փոխադարձ անհասկացողութիւնից, և փոխադարձ օտարացումից:

Եւ ժողովուրդը ոչ միայն չէր լըսում, այլ ինքն աջ ու ձախ նրանց

բռնում և յանձնում էր իշխանութեան
ձեռքը:

Աչա հենց ալդախիսի նարօգնիկնե-
րին և առհասարակ ուտօպիական սո-
ցիալիստներին է ինկատի ունեցել Կարէ
Մարկսը, երբ ասել է որ «բանւոր դա-
սակարգի ազատութիւնը, պէտք է լինի
նոյն բանւոր դասակարգի գործը»: Դո-
ւանով նա ուզում է ասել, որ ոչ հա-
սարակութեան բարձր դասակարգերը և
ոչ էլ կառավարութիւնը, որ կառավա-
րում է ալդ բարձր դասակարգերի շա-
հերի օգտին, և ոչ էլ ինտիլիգենցիան
ինքնուրոյն, իրանց միայն գեղեցիկ խօս-
քերով և փափուկ, գգայուն հոգով կը-
կարողանան ազատել բանւոր դասակար-
գը և նորա համար բաղդաւոր կեանք
ստեղծել: Ոչ:

Բարձր դասակարգերից եւ կառա-
վարութիւնից նա չըպէտք է սպասէ ոչ
ողորմութիւն, ոչ փրկութիւն, որովհետեւ
նրանք իրենք երսէք չեն ցանկանայ-

այդ տալու, նոյնպէս եւ ինտիլիգեն-
ցիան, որովհետեւ նա ինքը չի կարող
տալ այդ բոլորը, որովհետեւ նա
ինքնատինքեան արդէն թոյլէ եւ անզօր:

Պրօլետարիատը կըստանայ ի՞ս

ազատութիւնը, իրա եւ բոլոր ձնշած-
ների համար բաղդատութիւն ձեռք
կըբերի, կըհասատի բոլորի համար
արդարացի հասարակական կարգեր
միայն իրա սեփական ջանքերով, իրա
անհաշտ կուռվ բոլոր կեղերիշների եւ
շահագրղողների դէմ: Եւ միմիայն
պրօլետարիատի, վարձու բանուրների
դասակարգի, ընդհանուր մարդկութեան
այդ առաջնակարգ մարտնչողի օգնու-
թեամբ, ամբողջ ժողովուրդը իսկական
ազատութիւն եւ հաւասարութիւն ձեռք
կըբերի:

Բայց ինչու միայն բանւոր դասա-
կարգն է ներկայանում որպէս առաջ-
նակարգ, և ոչ մի որևէ ուրիշ դասա-
կարգ: Ինչու միայն նրան է պատկա-



նում գործը և պատիւը, և սեփական, և
ամբողջ ժողովրդի, ամբողջ աշխարհի ա-
զատութիւնը ևոչ ընդհանուր ժողովրդին:

Ժամանակակից բանւոր դասակարգը
(Համեմատաքար նոր դասակարգ) կա-
պիտալիստական կտզմի զաւակն է: Նա
գոյութիւն ունի ընդամենը հարիւր,
հարիւր լիսուն տարի, այն օրից, երբ
երեան եկաւ մեքենալական արդիւնա-
գործութիւնը և արդիւնաբերական կա-
պիտալը:

Նա դուրս եկաւ հին ճորտական
գիւղացիութեան և քաղաքային հին
մանր մեշշանստուոյի ծոցից. գիւղերում
նա աւելի և աւելի լցնում է իր շար-
քերը գիւղատնտեսական վարձու բանւոր-
ներով, ինքնորոյն գիւղական մշակներով.
Եսկ քաղաքներում, գործարանների և
զաւոդների բանւորներով, արհեստաւոր-
ներից և մանր առևտրականներից:

Նա կարծես նրանց տեղն է բռո-

նում, ինչպէս բուրժուազիան (առևտրա-
կան և արդիւնաբերական կապիտալիստ-
ները) բռնում է առաջւալ ճորտական ազ-
նւականութեան և վաշխառուների տեղը:

Բանւոր դասակարգը նոր բռլո-
ժուազական հասարակութեան դասա-
կարգն է, որ ծնունդ է առել հին ճոր-
տական ֆէոդալական հասարակութիւնից:

Եթէ առաջ մարդկանց ուղղակի
ոլժով էին ստիպում աշխատելու մի
կոյտ հարուստների ի ծնէ անգործ—պոր-
տաբոլծների համար, եթէ առաջ գոյու-
թիւն ունէր ճորտական գրութիւն և ճոր-
տական աշխատանք, այժմ մարդկանց
ստիպում են աշխատել նոյն այդ տեսակ
մի ուրիշ կոյտ անգործ և պորտաբոլծ
մարդկանց համար, պարարտացած փողա-
յին տուղերի համար. ստիպում են աշ-
խատել բանւորական ոլժի «կամաւոր» վա-
ճառման քողի տակ. «ազատ» վարձի և
«ազատ» պայմանի քողի տակ, իբր այժմ
գոյութիւն ունի վարձու աշխատանք:

Բայց բանւոր գասակարգը Փաբրիկաներում և գործարաններում իրան լոյս ընկած օրից, արդէն մշտական տեսնում է որ ալդտեղ ոչ մի ազատութիւն չկալ, որ քաղցածութիւնը ու ցուրտն է որ իրան քշում է Փաբրիկաները և գործարանները, որ նա տալիս է աշխատանքին իրա ամբողջ ոլժը և ժամանակը և համաձայնւում է չնչին վարձի միայն նրա համար, որ նրան, նախ քան Փաբրիկալ և գործարան ուղարկելը արդէն չքաւոր են դարձել։ Նա հասկանում է, որ կապիտալիստին ձեռնտու է որ նա ազքատ լինի և տայ մեքենային իրա ամբողջ ոլժը և ժամանակը. ձեռնտու է, որովհետև այդ դէպքում միայն պատերի տակ շատ բանւորներ կըմնան, որ այդ դէպքում միայն կապիտալիստներին ծառայելու պատրաստի պաշար կըլինի անգործների զօրաբանակը, որը մշտական սպառնա-

լիք կըդառնայ զբաղւած բանւորների գլխին, պատրաստ լինելով խլել նրանց ձեռքից կտոր հացը և խղճուկ անկիւնը։

ԶԵ որ այդ դէպքում միայն բանւոր գասակարգը կապիտալիստների ձեռքում հեզ մի գործիք կըդառնայ, որից նրանք թոկեր կըհիւսեն և կծծեն ամբողջ հիւթը։

Բանւորները հասկանում են այդ ամենը. և դորա համար էլ վազուց է որ անընդատ և մշտական կոիւ են մղում իրանց տէրերի դէմ, կոիւ բոլոր կեղեքիչների դէմ։

Ցոյցերի և գործադուլների միջոցաւ կուելով 8 ժամեալ բանւորական օրի և աշխատավարձի տւելացման համար, նրանք մի կողմից բարելաւում են իրանց գրութիւնը կուելով սեփական չքաւորութեան դէմ, միւս կողմից, կոււում են ընդհանուր չքաւորութեան դէմ, քչացնում են անգործների թիւը, պակասոցնում են անգործների պաշար

զօրաբանակը. այդպիսով, նրանք նւագեցնում են կապիտալիստին, սանձահարում են նրա շահագործական գործողութիւնները և դարձնում են նրան աւելի զիջող:

Բայց այդ գեռ քիչ է: Տէրերի հետ ունեցած բանւորների տնտեսական կուփիսկական ընթացքը և իրա բանւորի կեանքը պարզ ցոյց է տալիս նրանց, որ ողորմելի վաստակներով մի որեւէ սեփականութիւն ձեռք բերելու ոչ միայն յոյս չի կարող լինել նրանց մէջ, այլ որ նրանց վերջնական փրկութիւնը հէնց այն բանումն է կայանում, որ վերջի վերջոյ շըլինի և ոչ մի մասնաւոր սեփականութիւն, արդինագործական միջոցների վերայ, որովհետեւ հէնց մասնաւոր սեփականութեան իրաւունքի գոյութեան շնորհիւ այդ միջոցների վերայ, մի կողմից գուրս են գալիս կապիտալիստներ, այսինքն մարդիկ, որ իրանց սեփականութեան համար տհագին

հարստութիւններ են դիզել, որ տիրում է ամեն ինչի, իսկ միւս կողմից վարձութանւորներ, այսինքն, մարդիկ, որ զըլկւած լինելով ամեն մի սեփականութիւնից, ստիպւած են վաճառելու իրենց բանւորտկան ոլժը*):

*) Այդ վարձու բանւորները պարզ տեսնում են թէ որքան խարխուլ է մանր սեփականատէր-գիւղացիների և արհեստաւորների դրութիւնը՝ խոշոր կապիտալիստների հետ ունեցած իրենց կուռւմ: Նոյն սեփականութիւնը, որ առաջ, հին «արգար» ժամանակներում պահպանում էր արհեստաւորին և գիւղացուն ու նրանց ինքնորոշնութիւնը և համեմատական անկախութիւնը, այժմ նրանց նեղում և ճնշում է, ինչպէս կոճղը տաժանակրի ոտքերը: Խողէիններից նրանք վերափուցին տաժանակրերի, որոնք ստիպւած են մի օրում 20 ժամ աշխատել և շքաւորապել, որպէսզի պահպանեն միայն կապիտալիստների մըցումը: Խոկականներից, նրանք երեակայական սեփականատէրեր գարձան, որ սեփականութեան տէր են միայն թղթի վերայ և իրանց երեակայութեան մէջ որով-

Ահա թէ ինչու բանւորներ ըիրանց
տնտեսական կռւում աւելի և աւելի
պարզ սկսում են գիտակցել իրանց ընդ-
հանուր ղասակարզային շահերը և կո-
րիքները, որոնք անխուսափելիօրէն մը-
զում են նրանց սօցիալիզմի գիրկը. նը-
րանք գուրս են գալիս բոլոր արդիւնա-
գործական միջոցների մասնաւոր սեփա-
կանութեան դէմ, ճշգրիտ կերպով նկա-
տելով դրանում իրանց ամբողջ շքա-
ւորութեան աղբիւրը: Ալդ պատճառով
էլ նրանք նայում են դէպ առաջ, այն
նոր ապագայ աշխարհին, ուր ոչ սեփա-
կանաւոր կըլինի, ոչ ալրօլետար, ուր ոչ
հարուստներ կըլինեն, ոչ չքաւորներ,
ուր ֆարբկաները, գործարանները, մե-
քենաները և հողը կըպատկանի ամբողջ
հասարակութեան և ոչ մասնաւոր ան-
հատների, և ուր ամեքը հաւասար
հետեւ այդ սեփականութիւնը իրապէս վա-
զուց արգէն գտնում է կապիտալիստների
ձեռքում, որովհետեւ վաղուց է արգէն, որ նա
խճճւած է պարագերով և միքանի անդամ զրաւ
է դրւած:

կաշխատեն և հաւասար կօգտւին կեան-
քի բարեքներից: Եւ նրանք գնում են
գիմաւորելու ալդ նոր աշխարհին և կռ-
ւում են նրա շուտափոյթ գալու հա-
մար:

Ալդ պատճառով էլ բանւոր դասա-
կարգը ժամանակակից հասարակութեան
մէջ ներկայանում է որպէս մի աւելի ա-
ռաջնակարգ գասակարգ. միակ նաէ որ կը-
փրկէ ամբողջ աշխարհը և կազմաէ ին-
քն իրան:

Ալդ ազատարար կռւում ինտիլի-
գենցիան միայն օգնում է նրան, այն
ինտիլիգենցիան, որը ինչպէս և բանւոր
դասակարգը նոյն այն անապահովութեան
և կապիտալից կախում ունենալուց, սո-
վորել է նայել ապագայի վերայ բան-
սորի աչքերով:

Փոխանակ կապիտալին ծառայ դառնա-
լու, նա գնում է ծառայելու բանւոր
դասակարգին: Նա գնում է ծառայելու
նրան, իր գիտութիւններով, որոնց աշ-

խատանքով ծանրաբեռնւած բանւոր դասկարգը չի կարողանում բաւականաշափ ձեւք բերել. նա գնում է ծառալելու նրան իրա գլխով, իրա ուղեղներով, որոնք սովորել են նրանում աշխատելու, այնպէս, ինչպէս սովորել են աշխատանքի մէջ բանւորների մկաններլ: Եւ նա օգնում է բանւոր դասակարգին մտաւոր հայեացքով համակելու ամբողջ աշխարհը իր բոլոր աշխատաւորներով և շահագործողներով, բոլոր տիրապետողներով և շահագործողներով. նա օգնում է նրան աւելի խորը թափանցելու նրա չքաւորութեան պատճառների մէջ և սովորեցնում է նրան աւելի արագ և լաւ հասկանալու նրա գէմ դուրս եկած բոլոր սպառազինւած թշնամիներին, կարճ ասած, նա օգնում է նորան, որպէսզի նա տանի կուրը, լիովին գիտակցելով այդ կուրի նպատակները և լաւ միջոցներով, նորա պահելը: Եւ բանւոր դասակարգը այդպիսի

ինտիլիգենցիալի հետ միասին կազմում է իրա սեփական բանւորական կուսակցութիւնը որ կոչում է Սօցիալ-դեմոկրատական բանւորական կուսակցութիւն: Այդպիսի կուսակցութիւններ արգէն գոյութիւն ունեն բոլոր կուլտուրական երկիրներում, ինչպէս Եւրոպայի Արևմուտքում, այնպէս էլ Ամերիկայում. Սօցիալ-դեմոկրատական այդ կուսակցութիւնները վարում են արգէն ոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական կուրը, խլելով տիրող դասակարգերից և նրանց իշխանութիւններից, բանւոր դասակարգին հարկաւոր բոլոր օրէնքները, նւաճելով բուրժուազիայից թիզ թզի յետեւ այն հողը, որի վրայ նա կանգնած է, որի վրայ նա հիմնում է իրա իշխանութիւնը և տիրապետութիւնը:

Այդ կուսակցութիւնները իրանցից ներկայացնում են ամբողջ բանւոր դասակարգի գիտակց և առաջնակարգ

բանւորներից կազմւած մի միացած կազմակերպութիւններ, որ իր յետևից տանում է իրանից աւելի յետ մնացած ընկերների շարքերը, կուի է տանում ամբողջ դասակարգը թուլացած բուժժուական աշխարհի դէմ, կոիւ ասլագայ սօցիալիստական հասարակութեան համար։ Այդ կուսակցութիւնների մէջ բանւորները և ինտիլիգենտները արդէն չեն զանազանում, որովհետև ինտիլիգենտները լուծւել են բանւորական մասսայի մէջ, որովհետև ինտիլիգենտները հոգով դարձել են բանւոր, իսկ բանւորները իրանց զարգացումով դարձել են ինտիլիգենտներ։

Այժմ, երբ Ոռուսաստանում բանւոր դասակարգը ցոլց տւեց որ ինքն էլ արդէն այնքան մեծ է և ուժեղ, որ Ոռուսաստանի թուլացած ինքնակալութեան կազմին տեղ անգամ չի կարող լինել, երբ հին Ոռուսաստանին փոխարինելու գալիս է նորը, և ամբողջ ժողովուրդը

բաժանւած զանազան քաղաքական կուսակցութիւնների, ամեն մէկը իր գասակարգի շահերի պաշտպանութեան կուի են դուրս եկել մէկ մէկու և ինքնակալութեան դէմ։ Այժմ Ոռուսաստանի սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութեան բացարձակ դուրս գալը նշանակում է, որ մեզանում ևս ինչպէս վաղուց արդէն Արևմուտքի Եւրոպայում, վերջացած է ինտիլիգենտիայի վերաբերեալ հարցը, որպէս մի ինքնորոյն առանձին ոյժի։ Ոռուսաստանում այլևս անհետանում է ինտիլիգենտիայի և ժողովրդի միջի անդունդը, ել չի լինի արդէն առանց ժողովրդի առաջընթացող ինտիլիգենտիայ և չհասկացող ու իրանից ինտիլիգենտիային վանդող ժողովուրդ։

Ոռուսաստանումն էլ, ինչպէս և Արևմուտքի Եւրոպայում, ինտիլիգենտիան արդէն բաժանւում է մասերի, և այդ մասերից մէկը բուրժուական գը-

նում է ծառայելու բուրժուազիալին և
վերջնականապէս ձուլում է նրա հետ,
իսկ միւս մասը պրօլետարական—գնում,
է ծառայելու բանւոր դասակարգին և
նոյնպէս ձուլում է նորա հետ միակ
Ռուսաստանի սօցիալ—դեմօկրատական
բանւորական կուսակցութեան մէջ։



11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20.

21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30.

31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40.

41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50.

51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60.

61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70.

71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80.

Լոյս են տեսել եւ վաճառւում են

1. Գետնագործը Վ. Հիւգօ . . . 3 կ.
2. Լրտես » » . . . 10 կ.
3. Խնչպէս պէտք է ընտրել Մողովրդական
ներկայացուցիչներ (Ա. Տ. Բակուրցե). 2 կ.
4. Բանւոր գասակարգը և ինտիլիգեն-
ցիան (Վ. Զօրին) 4 կ.

Գումարով գնողներին 30% զիջում
կը լինի:

Դիմել՝ Ալեքսանդրոպոլъ, Арсену
Тер-Аракелянцу

804

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0044638

99/8

